

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1373

3K23

d-35

Ref. 11002-57

11002-57

№

ԼԵՆԻՆՅԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ

1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ Գ. ՍԻՄՈՆՅԱՆԻ

300 3X23
2661-26 L-35

48

ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ

(ՌԿՑՆՄ 3-րդ համազումարին, 1920 թ.
հոկտեմբերի 4-ին արտատպանած ձևով)

ՄԱՍ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՇՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

1925

329.154
L-36

329.154

10.09.2013

10827

006
JJ-1009

Книга набрана и отпечатана в 3-ей
типографии Госиздата С.С.Р. Армени.
Москва. Армянский пер. 2.

1373

3K23
L-35
V6



25 MAY 2013

25 NOV 2013

1003
12795

Մենք պետք է մանրամասնորեն կանգ առնենք այն հարցի վրա, թե ինչ պետք է ուսուցանենք մեր յերիտասարդությանը և ինչպես պետք է ուսանի այդ յերիտասարդությունը, յեթե նա, իրոք, կամենում է արդարացնել կոմունիստական յերիտասարդության անսւնը. մենք պետք է կանգ առնենք և այն հարցի վրա, թե ինչպես նախապատրաստել յերիտասարդությունը, վորպեսզի նա կարողանա ավարտել մեր սկսած գործը:

Յես պետք է ասեմ, վոր այս հարցի առաջին և, թվում է թե, ամենաբնական պատասխանն այն է, վոր յերիտասարդական միությունը և ընդհանրապես ամբողջ այն յերիտասարդությունը, վոր կամենում է կոմունիստական հասարակարգի անցնել, պետք է ուսանի կոմունիզմը:

Իայց «ուսանել կոմունիզմ» պատասխանը չափազանց ընդհանուր պատասխան է: Ինչ է մեզ հարկավոր, կոմունիզմն ուսանելու համար: Ինչ պետք է մենք ընտրենք ընդհանուր գիտելիքների գումարից, վորպեսզի կոմունիստական

գիտելիք ձեռք բերենք: Այս հարցում մեզ սպառնում են մի շարք վտանգներ, վորոնք հաճախակի դրսևորվում են, հենց վոր կոմմունիզմ ուսանելու ինդիբը դրվում է սխալ կերպով, կամ թե, յերբ նա հասկացվում է չափազանց միակողմանի ձևով:

Բնական է, վոր առաջին հայացքից առաջանում է այն միտքը, թե կոմմունիզմ ուսանել— այդ նշանակում է յուրացնել գիտելիքների այն գումարը, վոր շարադրված է կոմմունիստական դասագրքերում, բրոշյուրներում և աշխատություններում: Բայց կոմմունիզմ ուսանելու այդպիսի վորոշումը կլինեք չափազանց կոպիտ և անբավարար:

Յեթե միայն կոմմունիզմի ուսումնասիրությունը սահմանափակվեր այն ամենի յուրացումով, ինչ շարադրված է կոմմունիստական աշխատությունների, գրքերի և բրոշյուրների մեջ, ապա այդ դեպքում շատ հեշտությամբ մենք կստանայինք իրենց կոմմունիստ հորջորջողներ կամ անապարծներ, իսկ դա բացարձակապես մեզ ֆրաս կբերեր, վորովհետև այդ մարդիկ, սովորած և կարգացած լինելով այն ամենը, ինչ շարադրված է կոմմունիստական գրքերում և բրոշյուրներում, անկարող կլինեյին այդ բոլոր գիտելիքներն իրար կապել և գործել այնպես, ինչպես իրօք պահանջում է կոմմունիզմը:

Հին կապիտալիստական հասարակությունից մեզ մնացած ամենամեծ չարիքներից և դժբախտություններից մեկն էլ այն է, վոր գիրքը միանգամայն խզված էր կյանքի պրակտիկայից, վորովհետև մենք ունեյինք այնպիսի գրքեր, վորոնց մեջ ամեն ինչ նկարված էր ամենալավ գույներով, մինչդեռ այդ գրքերը մեծ մասով հանդիսանում էյին ամենագարշելի և կեղծավոր մի խաբեբայություն, վոր նկարում էր մեզ կապիտալիստական հասարակությունը: Ուստի վերին աստիճանի սխալ կլինի լոկ գրքերի միջոցով յուրացնել այն, ինչ ասվում է կոմմունիզմի մասին գրված գրքերում:

Այժմ մեր ճառերի և հողվածների մեջ բացակայում է այն ամենի սովորական կրկնությունը, ինչ առաջ ասվում էր կոմմունիզմի մասին, վորովհետև մեր ճառերը և հողվածները կապված են ամենորոյա և բազմակողմանի աշխատանքի հետ:

Առանց աշխատանքի, առանց պայքարի՝ գրքից, կոմմունիստական բրոշյուրներից և յերկերից կոմմունիզմին ծանոթանալը կատարելապես վոչ մի արժեք չունի, վորովհետև նա կշարունակեք պահպանել թեորիայի և պրակտիկայի կապի հին խզումը, այն հին խզումը, վոր հին բուրժուական հասարակության ամենագարշելի գիծն էր կազմում:

Ավելի վտանգավորն այն կլինեք, յեթե մենք սկսեյինք յուրացնել միայն կոմմունիստական լոգունգներ: Յեթե ժամանակին չհասկանանք այդ վտանգը և յեթե մեր ամբողջ աշխատանքը չուղղենք դեպի այդ վտանգի վերացումն, այդ դեպքում այն կես, կամ մեկ միլլիոն մարդիկ, շահել տղաներն ու աղջիկները, վորոնք կոմմունիզմի այդպիսի ուսումից հետո կսկսեն իրենք իրենց կոմմունիստ անվանել, մեծ վնաս կհասցնեն կոմմունիզմի գործին:

Այստեղ մեր առջև ծառանում ե այն հարցը, թե ինչպես պետք ե զուգորդենք այս ամենը՝ կոմմունիզմ ուսուցանելու համար: Ինչ պետք ե մենք վերցնենք հին դպրոցից, հին գիտությունից:

Հին դպրոցը հայտարարում եր, վոր նա ցանկանում ե բազմակողմանի կրթված մարդ ստեղծել, վոր նա ուսուցանում ե գիտություններ ընդհանուր առմամբ: Մենք գիտենք, վոր դա միանգամայն սուտ եր, քանի վոր ամբողջ հասարակությունը հիմնված եր դասակարգային բաժանման վրա, նրա մեջ մարդիկ բաժանված եյին շահագործողների և ճնշվածների, և զրանով ել պահպանվում եր այդ հասարակությունը: Բնական ե, վոր ամբողջ հին դպրոցը, լիովին անված լինելով դասակարգային վոգով, գիտելիքներ եր ընձեռնում միայն բուրժուազիայի յե-

րեխաներին: Նրա յուրաքանչյուր բառը կեղծված եր հոգուտ բուրժուազիայի:

Այդ դպրոցներում բանվորների և գյուղացիների յերիտասարդ սերունդները վոչ այնքան կրթվում եյին, վորքան բռնադատվում ի շահ նույն բուրժուազիայի: Այդ սերունդներն այնպես եյին դաստիարակվում, վոր բուրժուազիայի համար ստեղծվեյին պիտանի սպասավորներ, վորոնք ընդունակ լինեյին նրան շահույթ տալու և միաժամանակ չվրդովեյին նրա հանգիստն ու անգործությունը: Ուստի, ժխտելով հին դպրոցը, մենք մեզ համար խնդիր դարձրինք—վերցնել նրանից միայն այն, ինչ մեզ անհրաժեշտ ե՝ իսկական կոմմունիստական կրթության հասնելու համար:

Այժմ յես անցնում եմ այն հանդիմանություններին և մեղադրանքներին, վոր շարունակ լսում ենք հին դպրոցի հասցեյին և վորոնք հաճախ միանգամայն սխալ մեկնաբանության տեղիք են տալիս:

Ասում են, թե հին դպրոցը վարժեցնող, անգիր սովորեցնող դպրոց եր: Դա ճիշտ ե, բայց պետք ե կարողանալ տարբերել այն, ինչ հին դպրոցում վատ եր, և այն, ինչ մեզ ոգտակար ե, և պետք ե կարողանալ ընտրել նրանից այն, ինչ անհրաժեշտ ե կոմմունիզմի համար:

Հին դպրոցը վարժեցնող դպրոց էր, նա մարդկանց հարկադրում էր յուրացնել անագին թվով անպետք, ավելորդ, մեռած գիտելիքներ, վորոնք գլուխ եյին ուսցնում և յերիտասարդ սերունդը չինոգնիկներէ մի ընդհանուր ռանժիւրի վերածում: Բայց դուք հսկայական սխալ գործած զլինեք, յեթե փորձեք այն յեզրակացությունն անել, թե կարելի յե կոմմունիստ դառնալ, առանց յուրացնելու այն, ինչ կուտակել է մարդկային գիտելիքը: Սխալ զլինեք կարծել, թե բավական է յուրացնել կոմմունիստական լոզունգները, կոմմունիստական գիտութեան յեզրակացությունները, առանց յուրացնելու այն գիտելիքների գումարը, վորոնց արդյունքը հանդիսանում է կոմմունիզմը:

Թե ինչպես է կոմմունիզմը ծագել մարդկային գիտելիքների գումարից—դրա որինակը հանդիսանում է մարքսիզմը:

Դուք կարդացել և լսել եք այն մասին, վոր կոմմունիստական թեորիան, կոմմունիստական գիտությունն ստեղծել է գլխավորապես Մարքսը, վոր մարքսիզմի ուսմունքը դադարել է լինել մեկի, թեև XIX դարի հանճարեղ սոցիալիստի արտադրածը, վոր այդ ուսմունքն ամբողջ աշխարհում դարձել է տամայակ և հարյուր միլլիոնավոր պրոլետարների ուսմունքը,

պրոլետարներէ, վորոնք կիրառում են այդ ուսմունքը կապիտալիզմի դեմ մղվող իրենց պայքարում:

Յե՛վ յեթե դուք առաջադրեք այսպիսի մի հարց՝ ինչո՞ւ Մարքսի ուսմունքը կարողացավ տիրել ամենաճեղափոխական դասակարգի միլլիոնավոր և տամայակ միլլիոնավոր սրտերը,— դուք կարող եք մի պատասխան ստանալ. դա տեղի ունեցավ այն պատճառով, վոր Մարքսը հենվում էր կապիտալիզմի որով ձեռք բերված գիտելիքների հաստատուն հիմքին: Ուսումնասիրելով մարդկային հասարակութեան դարգացման որենքները, Մարքսը հասկացավ կապիտալիզմի դարգացման անխուսափելիությունը, կապիտալիզմի, վոր տանում է դեպի կոմմունիզմ, և, վոր գլխավորն է, նա ապացուցեց այդ միայն կապիտալիստական հասարակութեան ամենաճշգրիտ, ամենամանրամասն և ամենախոր ուսումնասիրութեան հիման վրա, ապացուցեց այն ամենի յուրացման ոգնութեամբ, ինչ տվել էր նախորդ գիտությունը:

Այն ամենը, ինչ մարդկային հասարակությունն էր ստեղծել, նա քննադատորեն ուսումնասիրեց, չթողնելով և վոչ մի կետ առանց ուղադրութեան: Այն ամենը, ինչ մարդկային միտքն էր ստեղծել, նա վերամշակեց, քննադատութեան

յենթարկեց, ստուգելով բանվորական շարժման վրա և արեց այն յեզրակացութիւնները, վոր բուրժուական շրջանակներով սահմանափակված կամ բուրժուական նախապաշարունակներով կաշկանդված մարդիկ չեյին կարող անել:

Սա պետք է նկատի ունենալ, յերբ մենք խոսում ենք, որինակ, պրոլետարական կուլտուրայի մասին: Առանց ճիշտ հասկանալու այն, վոր միայն մարդկութեան ամբողջ գարգացմամբ ըստեղծված կուլտուրան ճշգրտապես գիտնալով, նրա վերամշակմամբ կարելի յե ստեղծել պրոլետարական կուլտուրան, — առանց այս հասկանալու, մենք չենք լուծի այդ խնդիրը:

Պրոլետարական կուլտուրան անհայտ տեղից դուրս պրծած մի բան չե և վոչ ել իրենց պրոլետարական կուլտուրայի մասնագետներ անվանող մարդկանց հնարածը: Իս բացարձակապես անհեթեթութիւնն է: Պրոլետարական կուլտուրան պետք է լինի գիտելիքների այն պաշարի որինական զարգացումը, վոր մարդկութիւնը մշակել է կապիտալիստական հասարակութեան, կալվածատիրական և չինովնիկական հասարակութեան ճշման ներքո: |

Այդ բոլոր ուղիները և շավիղները մերձեցրել են և մերձեցնում են ու շարունակում են մերձեցնել պրոլետարական կուլտուրային ճիշտ

այնպես, ինչպես քաղաքատնտեսութիւնը, վոր մշակեց Մարքսը, մեզ ցույց ավեց, թե ինչի պիտի հանդի մարդկային հասարակութիւնը, նիշեց անցումը դեպի դասակարգային պայքարը, դեպի պրոլետարական հեղափոխութեան սկիզբը:

Յերբ հաճախ և՛ յերիտասարդութեան ներկայացուցիչներ շրջանում, և՛ նոր կրթութեան պաշտպաններ շրջանում լսում ենք հին դպրոցի դեմ ուղղված այն հարձակումները, թե նա անգիր սովորեցնող դպրոց էր, մենք ասում ենք, վոր մենք պետք է վերցնենք այն լավը, ինչ ունեւ հին դպրոցը:

Մենք հին դպրոցից չպետք է վերցնենք այն, ինչ յերիտասարդի հիշողութիւնը ծանրաբեռնում էր գիտելիքների անչափ քանակով, գիտելիքներ, վորոնք իննը տասերորդականով անպետք էյին և մի տասերորդով խեղաթյուրված, բայց դա չի նշանակում, թե մենք կարող ենք սահմանափակվել կոմմունիստական յեզրակացութիւններով և սերտել միայն կոմմունիստական լոզունգներ: Իրանով կոմմունիզմ չի ստեղծվի: Կոմմունիստ կարելի յե դառնալ միայն այն ժամանակ, յերբ կհարստացնես հիշողութիւնդ մարդկութեան մշակած բոլոր հարստութիւնների գիտեցումով:

Մեզ հարկավոր չե անգիր անելը, բայց մեզ

հարկավոր ե յուրաքանչյուր ուսողի հիշողութիւնը զարգացնել և կատարելագործել հիմնական փաստերի գիտեցումով, վորովհետև կոմունիզմը գատարկութիւն կդառնա, գատարկ մի ցուցանակ կդառնա և կոմունիստը կլինի միայն սովորական մի սնապարծ, յեթե նրա գիտակցութեան մեջ չեն վերամշակվի բոլոր ստացված գիտելիքները: Միւրք պետք ե վոչ միայն յուրացնել այդ գիտելիքները, այլև այնպես յուրացնել, վոր նրանց քննադատորեն վերաբերվել, վորպեսզի չծանրաբեռնեք ձեր միտքը այն անպետք բանով, ինչ հարկավոր չե, այլ հարստացնել այն բոլոր փաստերի գիտեցումով, առանց վորոնց ժամանակակից կրթված մարդ գոյութիւն ունենալ չի կարող: 11

Յեթե կոմունիստը մտածել ստացած պատրաստի յեզրակացութիւնները հիման վրա պարծենալ կոմունիզմով, չկատարելով լուրջ, դժվարին և մեծ աշխատանք, չքննելով այն փաստերը, վորոնց նա պարտավոր ե քննադատորեն վերաբերվել, այդպիսի կոմունիստը շատ թշվառ կլինել և այդպես վերևից նայելը կատարելապես կործանիչ: Յեթե յես գիտեմ, վոր քիչ բան գիտեմ, այնպես կանեմ, վոր ավելի շատ գիտեմ, բայց յեթե մեկը կասի, թե նա կոմունիստ ե և կարիք չունի վոչ մի բան հաստատ գիտենալու, ապա նրանից

կոմունիստի նման և վոչ մի բան դուրս չի գա:

Հին դպրոցը պատրաստում եր կապիտալիստների անհրաժեշտ սպասավորներ, հին դպրոցը գիտութեան մարդկանց դարձնում եր այնպիսի մարդիկ, վորոնք պետք ե գրեյին և խոսեյին, ինչպես հաճելի յեր կապիտալիստներին: Արդյո՞ք սա նշանակում ե, վոր մենք պետք ե այդ վերացնենք: Բայց յեթե մենք պետք ե այդ վերացնենք, յեթե մենք պետք ե այդ քայքայենք, արդյո՞ք դա նշանակում ե, վոր մենք չպետք ե նրանից վերցնենք այն ամենը, ինչ իբրև անհրաժեշտութիւն կուտակել ե մարդկութիւնը:

Արդյո՞ք սա նշանակում ե, վոր մենք չպետք ե կարողանանք տարբերել այն, ինչ անհրաժեշտ եր կապիտալիզմին, և այն, ինչ անհրաժեշտ ե կոմունիզմին:

Այն հին վարժեցման տեղը, վոր, հակառակ մեծամասնութեան կամքի, կիրառվում եր բուրժուական հասարակութեան մեջ, մենք դնում ենք բանվորների և դյուղացիների գիտակցական դիսցիպլինան, վորոնք դեպի հին հասարակութիւնը տածած իրենց ատելութեանը միացնում են վճռականութիւն, կարողութիւն և պատրաստականութիւն՝ համախմբելու և կազմակերպելու ուժերն այդ պայքարի համար, վորպեսզի ջլատված, բաժանված հսկայական յերկրի ամ-

բողջ տարածութեան վրա ցրված միլիոններէից և հարյուրավոր միլիոններէից ստեղծվի միամանկան կամք, քանի վոր առանց այդ միամանկան կամքի մենք անխուսափելիորեն ջարդված կլինենք: Առանց այդ միաբանութեան, առանց բանվորների և գյուղացիների գիտակցական դիտարկումների մեր գործն անհուսալի յե: Առանց դրան ամբողջ աշխարհի կապիտալիստներին և կալվածատերերին մենք հաղթել չենք կարող: Մենք նույնիսկ չենք ամբացնի հիմքը, չխոսելով այն մասին, թե այդ հիմքի վրա կարող ենք կառուցել նոր կոմունիստական հասարակութիւն:

Նույնպէս և ժխտելով հին դպրոցը, միանգամայն որինական և անհրաժեշտ ատելութիւն տածելով դեպի այդ հին դպրոցը, գնահատելով հին դպրոցը քայքայելու պատրաստակամութիւնը, մենք պետք է հասկանանք, վոր հին վարժեցման, անգիր սովորեցնելու տեղը մենք պետք է դնենք մարդկային գիտելիքների ամբողջ գումարն ընդգրկելու կարողութիւնը, և ընդգրկելու այնպէս, վոր կոմունիզմը մի ինչ վոր սերտած բան չդառնա, այլ ձեր կողմից մտածված լինի և հանդիսանա այն յեզրակացութիւնները, վոր անխուսափելի յեն արդի կրթութեան տեսակետից:

Ահա այսպէս պետք է դնել հիմնական խնդիրները, յերբ մենք խոսում ենք կոմունիզմի ուսանելու հարցի մասին:

Յես պատասխանեցի այն հարցերին, թե ինչ պետք է ուսանենք, ինչ պետք է վերցնենք հին դպրոցից, հին գիտութիւնից: Յես կաշխատեմ պատասխանել և այն հարցին, թե ինչպէս պետք է այդ ուսանել:—Միայն դպրոցական գործունեութեան ամեն մի քայլ, կրթութեան և ուսման ամեն մի քայլ անխզելի կապերով շաղկապելով բոլոր աշխատավորներին՝ շահագործողների դեմ մղվող պայքարի հետ:

Յերիտասարդութեան այս կամ այն կազմակերպութեան աշխատանքի փորձից վերցրած մի քանի որինակով յես, ակնառու կերպով, ցույց կտամ, թե ինչպէս պետք է ընթանա կոմունիզմի այդ դաստիարակութիւնը:

Բոլորը խոսում են անգրագիտութեան վերացման մասին: Դուք գիտեք, վոր անգրագետ յերկրում կոմունիստական հասարակութիւնը կառուցել չի կարելի: Բավական չէ, վոր Սորհրդային իշխանութիւնը հրամայի, կամ կուսակցութիւնը վորոշ լողունգ տա, կամ թե լավագոյն աշխատողների վորոշ մասը նետվի դեպի այդ գործը: Դրա համար անհրաժեշտ է, վոր յերիտասարդ սերունդն իր վրա առնի այդ գործը:

կոմմունիզմը կայանում է նրանում, վոր այն յերիտասարդությունը, այն պատանինները, այն աղջիկները, վորոնք յերիտասարդական միության մեջ են, ասեն. դա մեր գործն է, մենք կմիանանք և կգնանք գյուղերը վերացնելու անգրագիտությունը, վորպեսզի մեր աճող սերունդն անգրագետներ չունենա: Մեր ձգտումն այն է, վոր աճող յերիտասարդության ինքնագործունեյությունը նվիրվի այդ գործին:

Իսկ գիտեք, վոր Ռուսաստանը խավար, անգրագետ յերկրից գրագետ դարձնել շուտով չի կարելի, բայց յեթե այդ գործն իր վրա առնի յերիտասարդական միությունը, յեթե ամբողջ յերիտասարդությունը աշխատի հոգուտ բոլորի, այն ժամանակ, այդ միությունը, վոր 400,000 պատանիներ և աղջիկներ է համախմբում, իրավունք կունենա յերիտասարդական կոմմունիստական միություն կոչվել: Միության խնդիրն է—անհրաժեշտ գիտելիքներ յուրացնելով ոգնել այն յերիտասարդությանը, վորն իր միջոցներով չի կարող ազատագրվել անգրագիտության խավարից:

Յերիտասարդական միության անդամ լինել — նշանակում է իր աշխատանքը, իր ուժերը ընդհանուր գործին նվիրել: Ահա դրա մեջ է կայանում կոմմունիստական դաստիարակությունը:

Միայն այդպիսի աշխատանքով յերիտասարդ տղան կամ աղջիկն իսկական կոմմունիստ կդառնան: Նրանք կոմմունիստներ կդառնան միայն այն դեպքում, յեթե նրանք այդ աշխատանքով կարող կլինեն գործնական աջողություններ ձեռք բերել:

Որինակի համար վերցրեք քաղաքի մոտ գտնվող բանջարանոցների աշխատանքը: Դա յերիտասարդության կոմմունիստական միության խնդիրներից մեկն է: Ժողովուրդը քաղցած է, ֆաբրիկաներում և գործարաններում սով է: Սովից փրկվելու համար պետք է բանջարանոցները բազմացնել, սակայն յերկրագործությունը տարվում է դեռ հին ձևով:

Կոմմունիստական յերիտասարդության միությունը պետք է մի այնպիսի հարվածային խումբ լինի, վորն ամեն մի աշխատանքում իր ոգնությունը հասցնի, յերևան բերի իր նախաձեռնությունը: Միությունը պետք է լինի այնպիսին, վոր ամեն մի բանվոր տեսնի, վոր նրա մեջ մտել են մարդիկ, վորոնց ուսմունքը իրականանալի յե, իրեն հասկանալի, վորոնց ուսմունքին նա, գուցե, միանգամից չհավատա, բայց վորոնց կենդանի աշխատանքից, գործունեյությունից տեսնի, վոր դրանք իսկապես այն մարդիկն են, վորոնք նրան ճիշտ ուղի յեն ցույց տալիս:

1903
59795



Յեթե յերիտասարգության կոմմունիստական միութիւնը բոլոր բնագավառներում չի կարողանա այդպես կառուցել իր աշխատանքը, դանշանակում ե, վոր նա կսայթաքի դեպի հին բուրժուական ուղին:

Մեր դաստիարակութիւնը պետք է միացնել աշխատավորներին՝ շահագործողներին դեմ մղվող պայքարին, վորպեսզի ոգնել առաջիններին լուծելու կոմմունիզմի ուսմունքից բղխող խնդիրները:

Միութեան անդամները պետք է իրենց յուրաքանչյուր ազատ ժամը գործադրեն բարելավելու բանջարանոցը, կամ վորևէ ֆաբրիկայում ու գործարանում կազմակերպեն յերիտասարգութեան ուսուցումը և այլն:

Մենք ցանկանում ենք Ռուսաստանը աղքատ և թշվառ յերկրից հարուստ յերկիր դարձնել: Յեվ անհրաժեշտ է, վոր յերիտասարգութեան կոմմունիստական միութիւնն իր կըրթութիւնն, իր ուսումը և իր դաստիարակութիւնը միացնի բանվորներին և գյուղացիներին աշխատանքի հետ, վորպեսզի նա չպարփակվի դպրոցներում և չսահմանափակվի լոկ կոմմունիստական գրքեր և բրոշյուրներ կարդալով:

Միայն բանվորներին և գյուղացիներին հետ միասին աշխատելով կարելի յէ իսկական կոմմունիստ դառնալ:

Յեվ անհրաժեշտ է, վորպեսզի բոլորը տեսնեն, վոր յերիտասարգութեան միութեան մեջ մանողը գրագետ է ու նաև կարող է աշխատել: Յերբ բոլորը կտեսնեն, թէ ինչպես մենք հին դպրոցից վանեցինք մուշտրան, այդ փոխարինելով դիտակցական դիսցիպլինայով, թէ ինչպես յուրաքանչյուր յերիտասարգ մասնակցում է շաքաթոյակին, թէ ինչպես նրանք ոգտագործում են ամեն մի քաղաքի մոտ գտնվող տնտեսութիւնն՝ ազգաբնակչութեանը ոգնելու համար, ժողովուրդը կսկսի նայել աշխատանքին վոչ այնպես, ինչպես առաջ եյին նայում:

Յերիտասարգութեան կոմմունիստական միութեան խնդիրն է՝ գյուղում կամ իր թաղամասում ոգնութիւն կազմակերպել այնպիսի մի գործում, — փոքրիկ որինակ եմ վերցնում, — ինչպիսին մաքրութեան պահպանումն է կամ սնունդի բաշխումը:

Ինչպե՞ս եր դա կատարվում կապիտալիստական հին հասարակութեան մեջ:

Ամեն վոք աշխատում եր իր համար, և վոչ վոք չեր ուզում տեսնել, վոր այնտեղ ծերեր և հիվանդներ կային և վոր ամբողջ տնտեսութիւնն ընկնում եր կնոջ ուսերին, վորն այդ պատճառով ել գտնվում եր ճնշված, ստրկացած վիճակում: Ո՞վ պետք է պայքարի դրա դեմ: Յե-

րիտասարդական միութիւնները, վորոնք պետք ե ասեն. մենք դա կփոխենք, մենք կկազմակերպենք յերիտասարդների այնպիսի շոկատներ, վորոնք սիստեմատիկաբար շրջելով տները, կոգնեն մաքրութիւն պահպանելուն կամ մնունդի բաշխման և կազմակերպված կգործեն ամբողջ հասարակութեան ոգտին, ճիշտ կերպով բաշխելով ուժերը և ցույց տալով, վոր աշխատանքը պիտի կազմակերպված լինի:

Այն սերունդը, վորի ներկայացուցիչներն այժմ մոտ 50 տարեկան են, չի կարող հուսալ, թե նա կտեսնի կոմունիստական հասարակութիւնը: Մինչ այդ ժամանակ այդ սերունդը կմեռնի:

Իսկ այն սերունդը, վորն այժմ 15 տարեկան ե, կոմունիստական հասարակութիւնը և կտեսնի և ինքը կը կառուցի այդ հասարակութիւնը:

Յեւ նա պետք ե գիտենա, վոր իր կյանքի ամբողջ խնդիրն այդ հասարակութեան կառուցման մեջ ե կայանում:

Հին հասարակութեան մեջ աշխատանքը կատարվում եր առանձին ընտանիքով, և վոչ վոք աշխատանքը չեր միացնում, բացի կալվածատերերից ու կապիտալիստներից, վորոնք ճնշում եյին ժողովրդի հսկայական մասսաներ: Մենք

պետք ե ամեն մի աշխատանք, վորքան ել նա կեղտոտ և դժվարին լինի, այնպես կազմակերպենք, վոր յուրաքանչյուր լսնվոր և գյուղացի նայի իր վրա այսպես. յես—ազատ աշխատանքի մեծ բանակի մի մասն եմ և կկարողանամ ինքս կառուցել իմ կյանքն առանց կալվածատերերի և կապիտալիստների, կկարողանամ կոմունիստական կարգեր հաստատել:

Պետք ե, վոր յերիտասարդական կոմունիստական միութիւնը բոլորին, յերիտասարդ հասակից, դաստիարակի գիտակցական կարգապահ աշխատանքում:

Ահա թե ինչ ձևով մենք կարող ենք հուսալ, վոր առաջադրած խնդիրները կլուծվեն:


Մենք պետք ե նկատի ունենանք, վոր մեզ անհրաժեշտ ե 10 տարուց վոչ պակաս ժամանակաշրջան՝ ելեքտրիֆիկացիայի համար, վորպեսզի մեր աղքատացած յերկրին կարողանանք սպասավորել տեխնիկայի վերջին նվաճումների համաձայն:

Յեւ անա այն սերունդը, վոր 15 տարեկան ե և 10—20 տարուց հետո կսկսի ապրել կոմունիստական հասարակութեան մեջ, պետք ե իր ուսման վողջ խնդիրներն այնպես դնի, վոր յուրաքանչյուր որ ամեն մի գյուղում և քաղաքում յերիտասարդութիւնը գործնականորեն լուծի

ընդհանուր աշխատանքի այս կամ այն խնդիրը,
թեկուզ ամենափոքրիկ, ամենահասարակ խնդիրը:

Այն չափով, ինչ չափով վոր այդ կիրագործ-
վի յուրաքանչյուր գյուղում, ինչ չափով վոր
կզարգանա կոմունիստական մրցությունը և
յերիտասարդությունը կապացուցի, վոր նա կա-
րող է միանամուռ աշխատանք տանել, այդ չա-
փով ել ապահովված կլինի կոմունիստական շի-
նարարության աջողությունը:





«Ազգային գրադարան»



NL0178873

